

## II

### ՄԽԻԹԱՐՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՇԱՀԱՄԻՐՅԱԼՆԵՐԻ ՄԱՏԵԼԱԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ («Բառգիրք Հայկազեան լեզուի»-ն իբրև «Նոր տետրակի» աղբյուր)

#### ՊՈՂՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Շահամիրյանների գործունեությունը XVIII դ. երկրորդ կեսի հայոց պատմության ամենալուսավոր էջերից է: Նշանավոր մեծահարուստ Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ, հեռավոր Հնդկաստանի Մադրաս քաղաքում գործող հայրենասերների խմբակը նոր լիցք հաղորդեց հայ ազատագրական շարժմանը մշակելով քաղաքական որոշակի ծրագիր և մաքառելով նրա իրականացման համար: Ծնվեց Հայաստանի ապագա հանրապետության գաղափարը, որի իրականացումը կապվում էր թուրքական և պարսկական բռնապետությունների դեմ հայ ժողովրդի միասնական պայքարի հետ, սլաքար, որին օժանդակելու էին Ռուսաստանը և Քարթլի-Կախեթի վրաց պետությունը: Մադրասի հայրենասերները դա համարում էին հայերի արգար և սուրբ իրավունքը. «...լինիցուք մեք տէր միմիայն յաշխարհին մերոյ և թուլյ մի՛ տացուք, զի քայլ մի ի յերկրէ այլոց աւելանալոյ վասն մեր և ի մէնջ պակասիլ վասն այլոց: Ուրեմն ջանալ և աշխատ առնել ստանալ այն, որ սեպհական ժառանգութիւն է Հայոց, ոչ է անիրաւութիւն, եթէ ոչ՝ արդարութիւն»<sup>1</sup>:

Շահամիրյանները բարոյական բարձրագույն սկզբունք հռչակեցին անձնազոհության գաղափարը, անմնացորդ նվիրումը հայրենիքի ու ժողովրդի շահերին: «...նոստովանիմ առաջի Աստուծոյ և մարդկան, որ ոչ ունիմ ցանկութիւն ըստ անձի, ոչ իշխանութեան և ոչ հարստութեան և փառաց, բայց միայն կատարեալ սիրով կապակցել կամ ընդ սեպհական ազդն իմ և աշխարհն մեր՝», – ասված է «Որոգայթ փառաց»-ի առաջաբանում:

Մադրասի խմբակը հեղինակեց և հրատարակեց երեք գիրք՝ «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» (1772–1773 թթ.), «Որոգայթ փառաց» և «Տետրակ, որ կոչի Նշաւակ», առաջին երկուսը Շահամիրի որդու՝ 1774 թ. քսանինը տարեկանում վախճանված Հակոբ Շահամիրյանի անունով, իսկ վերջինը՝ անանուն: Հակոբի անունը դառնում է խորհրդանիշը մի խմբակի գրական արտագրանքի համար, որի բոլոր նշանավոր անդամները թե՛ նրա հայրը՝ Շահամիր Շահամիրյանը, թե՛ ուսուցիչը՝ Մովսես Բաղրամյանը, գուցե և Հովսեփ Էմինը, իսկ նրանց հետ մանավանդ ինքը՝ Հակոբ Շահա-

<sup>1</sup> Որոգայթ փառաց. Մադրաս, 1773, էջ 139:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 9:

միրյանը, այս կամ այն չափով իրենց մասնակցությունն են բերել այդ գրքերի ստեղծմանը:

Հայագիտությունը, դեռևս Մ. Չամչյանից սկսած, հատկապես նորագույն շրջանում, պատմաբանասիրական լուրջ հետազոտություններ է կատարել Շահամիրյանների գործն ու վաստակը գնահատելու ուղղությամբ (Լեո, Մ. Սեթ, Թ. Գուշակյան, Ա. Ալպոյաճյան, Թ. Ավդալբեգյան, Ս. Տեր-Ավետիսյան, Ա. Ռ. Հովհաննիսյան, Իրազեկ, Ա. Շ. Մնացականյան, Վ. Ռ. Գրիգորյան և ուրիշներ): Բացահայտված ու արժեքավորված են նրանց գաղափարաբանությունն ու աշխարհայացքը, քաղաքական ծրագրերն ու դիվանագիտական առնչությունները, լուսաբանված են նրանց գործունեության հետ կապված բազմաթիվ մուծ կետեր, խմբակի աշխույժ կապերը Էջմիածնի հայոց կաթողիկոսության, Արցախի հայ մելիքների և վրաց Հերակլ II թագավորի հետ: Սակայն Շահամիրյանների գրական և դիտական ժառանգությունն իր ամբողջության մեջ դեռևս կարոտ է ուսումնասիրություն: Մասնավորապես առաջնահերթ է և դրա քննությունը աղբյուրագիտական առումով, որի լուծումը կնպաստեր ի հայտ բերելու Շահամիրյանների ստեղծած գրականության հայրենական և միջազգային ակունքները: Հարցը, անշուշտ, միայն այն չէ, թե փաստական ինչ նյութի վրա են խարսխվում նրանց երկերը, այլ նաև այն, թե գաղափարական ինչ շփման կետերից է գոյացել նրանց հայացքների ամբողջությունը, որն իրավացիորեն դիտվում է որպես հայ հասարակական մտքի բարձրակետը XVII դ. վերջին երեսնամյակում, ինչպես նաև Արոսյանից քիչ առաջ:

Գիտակցելով այդ խնդրի կարևորությունը մենք նպատակ ենք հետապնդում հրատարակել Շահամիրյանների երախայրիքի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գրքի աղբյուրներից մեկը, որը մինչև այժմ զարմանալիորեն աննկատ է մնացել ուսումնասիրողների կողմից:

Հակոբ Շահամիրյանի «Նոր տետրակը», ինչպես հայտնի է, բաղկացած է ութ գլխից և երեք փոքրիկ, այսպես կոչված, մաղթանքներից ու աղբյուրանքներից: Առաջին չորս գլուխը չափածո տողատումով և հանգավորված, բայց արձակին բնորոշ ոչ կանոնավոր ուղղակի խոսքեր են ուղղված հայ պատանիներին ու երիտասարդներին, առհասարակ հայ ժողովրդին և եկեղեցականներին: Դրանց հաջորդում են Հայաստանի պատմությանը, աշխարհագրությանը, հայկական պետականության կործանման պատճառներին, խանական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի հարկային անողոք քաղաքականության պայմաններում հայ ժողովրդի ծանր վիճակին վերաբերող գլուխները: Այլ կերպ «Նոր տետրակը» մի գիրք է Հայաստանի անցյալի ու ներկայի մասին, որի հեղինակն ամենուրեք այն միտքն է զարգացնում, որ հայ ժողովուրդն ի դորու է հասնելու ազգային անկախության, դրա համար հարկավոր է, որ հայ երիտասարդությունը սթափվի ծուլության վեհերոտ ու անհոգ թմրությունից, ամբողջ ժողովուրդը երկրում ոտքի կանգնի և կռվի անկախության համար: Պատրաստակամ լինի և օտարներին վճարվող տասնյակ հարկերի գեթ տասներորդ մասը տալու հայ այն իշխաններին, որոնք ազատագրական շարժում կկազմակերպեն (անշուշտ հեղինակը նկատի ունի Արցախի հայ մելիքներին), նպաստելու այն մարգուն, որը կգա և կգլխավորի նրա ազատամարտը:

«...թէ ելցեն իշխանք յազգէ Հայոց... կամ ո՛ր և իցէ, որ վասն ազատութեան ազգին Հայոց գուն գործեալ ջանայցէ, յառաջեացեն համայնքն մինքան զմիւսն օգնել նմա... Զի դիւրին է, եթէ զմին ի տասանց հարկաց իւրեանց, զորս տան այլազգեաց, տայցեն այնմիկ օգնութիւն, և նա ինքն գիտասցէ, թէ որպէ՛ս պարտ է առնել՝ արասցէ, և Տէր եղիցի նմա օգնական»<sup>3</sup>:

Եթե նկատի ունենանք այն, թե «Նոր տետրակի» հեղինակը հայ երիտասարդութեանը գալիք պայքարի համար հայրենասիրութեան ոգով դատարարակելու և նախապատրաստելու գործում որքան մեծ նշանակություն էր տալիս հայ անցյալն ու ընաշխարհը ճանաչելուն, ապա պարզ կլինի, թե ինչո՞ւ գրքի երկու ամենաընդարձակ բաժինները՝ 5-րդ և 6-րդ գլուխները հատկացրել է Հայաստանի պատմությանն ու աշխարհագրությանը: Նրա ելակետն այս է: Հայ ժողովուրդը վաղ ժամանակների իր փառապանծ պատմությամբ սրբագործել է սեփական երկրի տերը լինելու իրավունքը: Հայի կորցրած հայրենիքի նկատմամբ փայփայանքն ու հպարտությունը Հակոբ Շահամիրյանի անունից «Որոգայթ փառաց»-ում այսպիսի ձևակերպում է ստանում. «Համեմատելով իմ աշխարհ ընդ աշխարհի, մարդ ընդ մարդոյ, հօգ ընդ հօգոյ, բոյս ընդ բուսոյ, բարեգոյն, քաղցրագոյն և պատուականագոյն գտայ երկիրն Արարատեան, քան թէ բոյոր երկիրք ի ներքոյ արեգական, որում կարի ասել երկիրն Արարատեան ընդ բարձրաբերձ լեռամբ Մասիսաւ թագաւոր արար Տէր ի վերայ ամենայն երկրի և ի վերայ ամենայն լեռանց...»<sup>4</sup>:

Եվ ահա «Նոր տետրակում» հայի համար հայտնագործվում է այդ Հայաստանը: Արդ, գրքի 5-րդ և 6-րդ գլուխների համար մատենագրական ի՞նչ աղբյուրներ է ունեցել Հակոբ Շահամիրյանը: Պետք է ասել, որ նա, բացի Մովսես Խորենացուց, ուղղակի որևէ սկզբնաղբյուր չի հիշատակում: Հինգերորդ գլխում հայոց պատմության շարադրանքը սկզբից մինչև Արշակունյաց թագավորության անկումը գրեթե բառացի բանաքաղված է Պատմահոր «Հայոց պատմությունից» համառոտված ու տեղ-տեղ լրացված այլ աղբյուրների դրվագներով ու տվյալներով, մասնավորապես Ս. Գրքից և Աղաթանգեղոսից, Փավստոս Բուզանդից ու դարձյալ Ս. Գրքից միջնորդ աղբյուրների միջոցով վերապատմված ձևով: Հաշվի առնելով ժամանակի ընթացողի ցածր մակարդակը՝ Պատմահոր գրքից քաղված բազմաթիվ հատվածներում անհասկանալի առանձին բառեր ու արտահայտություններ որոշ գեպքերում բացատրվում են:

«Նոր տետրակի» 5-րդ գլխում Կիլիկյան Հայկական թագավորության անկման թվականի կապակցությամբ հիշատակվում է Ղազար Զահկեցու անունը (1737–1751 թթ. Հայոց կաթողիկոս): Դժվար չէ նկատել, որ գրքի այդ բաժնում իբրև աղբյուր օգտագործված է նաև վերջինիս «Դրախտ ցանկալի» գրքի 20-րդ գլուխը: Բացի բաղմամբիվ հատվածներ բանաքաղելուց, «Նոր տետրակի» հեղինակն ամբողջ գլխի նյութը կառուցում և Արշակունիներին հաջորդող հայ մարզպանների, իշխանների ու թագավորների ժամանակագրական հաջորդությունը՝ շեղումներով, լրացումներով ու

<sup>3</sup> Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ (այսուհետև՝ Նոր տետրակ), էջ 206:

<sup>4</sup> Որոգայթ փառաց, էջ 9–10:

ճշգրտումներով Հանդերձ ներկայացնում է ըստ Ջահկեցու գրքի նշված գլխի:

Կառուցվածքային առումով «Նոր տետրակի» 5-րդ գլուխը «Դրախտ ցանկալի»-ի 20-րդ գլխից միայն մեկ էական շեղում ունի. մարգպանական շրջանը ներկայացնում է առանձին հատվածով ու ենթավերնագրով: «Նոր տետրակը» նաև բավականաչափ լրացրել ու հարստացրել է այդ շրջանի պատմության բուն շարադրանքը կարևոր այլ սովյալներով ու դինաստիական ճյուղավորումներով, որոնք «Դրախտ ցանկալի»-ում բացակայում են, տեղ է հատկացրել և հայ մյուս թագավորական տներին (Արծրունիներ, Կյուրիկյաններ և այլն), որոնք Բագրատունիների ժամանակ և նրանցից Հետո իշխել են Հայաստանի տարբեր կողմերում (Վասպուրական, Կարս—Վանանդ, Լոռի—Տաշիրք, Սեբաստիա և այլն): Իսկ ամբողջ գլխի վերջում, որպես նորություն հայ մատենագրության մեջ, պատմում է Արցախի մելիքների մասին: Բավական լայն ընդգրկումով, պատմական սովյալների ճոխությունը, ազատ ու անկաշխանդ պատմեցողական և հայրենասիրական շեղումով ևս «Նոր տետրակի» այս գլուխն անհամեմատ բարձր է Ջահկեցու գրքի 20-րդ գլխից, որը չոր ու թուղեղ մի շարադրանք է:

Այդուամենայնիվ, Ջահկեցին «Նոր տետրակի» համար դարձել է հիմնական սկզբնաղբյուր: Նույնիսկ խորենացու պատմությանը վերաբերող նյութը որոշ դեպքերում «Նոր տետրակի» հեղինակը հարմար է գտել վերջնելու ոչ թե անմիջապես խորենացուց, այլ Ջահկեցուց վերջինիս համառոտ վերաշարադրանքը փոքր-ինչ խմբագրելով: Համապատասխան գուգահեռ հատվածների մեր կատարած համեմատությունները, որ հարմար չենք գտնում մեջբերել, «Նոր տետրակի» կախումը Ջահկեցու գրքից այնքան ակնհայտ է, որ լրացուցիչ բացատրության կարիք չի զգացվում:

Լևոն VI և Կիլիկյան հայկական պետության կործանման կապակցությամբ «Նոր տետրակում» մատնացույց է արվում մի այլ աղբյուրը՝ «Իսպանացիների պատմություն»: Խոսքը հատկապես ի՞նչ պատմության մասին է՝ պիտի է ասել: Այդպիսի գործ մինչև օրս հայտնի չէ: Դուրս ֆրանսիացի ժան Դարդելի՞ պատմությունն է նկատի առնված: Դարդելը, ինչպես պիտենք, կազմակերպել է Լևոն Լուսինյանին գերությունից փրկելու գործը և նրա խոստովանահայրն է եղել: Նրա պատմությանը, թերևս, Շահամիրյանների դորձակից և գաղափարական առաջնորդ Հովսեփ Էմինը կարող էր ծանոթացած լինել եվրոպական իր թափառումների տարիներին: Սակայն «Նոր տետրակը» իր հիշած աղբյուրին վերագրում է և այնպիսի տեղեկություններ, որոնք ժան Դարդելի ֆրանսերեն պատմության մեջ չկան:

«Նոր տետրակի» աղբյուրագիտական կարգի հուշումներն ու հղումները սահմանափակվում են այդքանով: Բայց 5-րդ գլխի հատկապես Արշակունյաց հարստության անկումից մինչև Կիլիկյան հայկական թագավորական տների վերացումը՝ ավելի քան հազարամյա պատմությունը ներկայացնող այդ մասը, չէր կարող ստեղծվել Ջահկեցու գրքի խիստ թուղեղիկ 20-րդ գլխի հիման վրա: Այդ մասը սլարունակում է որոշակի համակարգի բերված պատմական այնպիսի ճոխ ու բազմազան սովյալներ, որոնք քաղված կարող են լինել այլևայլ աղբյուրներից: Կարելի է ենթադրել, որ

«Նոր տետրակի» հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է Եղիշեի, Հովհան Մամիկոնյանի, Հովհաննես Դրասխանակերտցու, Մեսրոպ Վայոցձորեցու պատմությունները, Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը», Սմբատ Գունդստաբլի «Տարեգրությունը», Շնորհալու և նրա շարունակող Վահրամ Բարունու «Վիպասանությունը», Հեթում II թագավորի չափածո ընդարձակ հիշատակարանը Հեթումյանների մասին, հայկական «Հայսմավուրքի» իլլաթեցու խմբագրությունը, Կղեմես Գալանոսի «Միաբանությունը Հայոց ս. եկեղեցւոյն ընդ մեծի ս. եկեղեցւոյն Հռովմայ» գիրքը և էլի ուրիշ աղբյուրներ: Հարկավոր էր մի հմուտ ձեռք, որ բազմաթիվ աղբյուրներից քաղեր այդ նյութը, համադրեր, խմբավորեր, մի որոշ տեսքի բերեր. իսկ Հակոբ Շահամիրյանն այդ հնարավորությունը չուներ. որովհետև շատ կարճ ժամանակում է շարադրել ու գլուխ բերել «Նոր տետրակի» տպագրությունը (7 ամսվա մեջ), նույնիսկ ժամանակ չի ունեցել հանգամանորեն սրբագրելու գրքի շարվածքը, այնքան շտապել է: Հեղինակն ինքն այդ մասին ծանուցել է. «...ոչ այնքան նկրտեցաք ի գեղեցիկս երևեցուցանել, որքան աճապարեցաք ճեպով ի լոյս ածել, և չև ևս ի լրումն էր հասեալ եօթներորդի ամսոյն, կատարումն գործն էառ: Զի իբր ի վերնագոյն հրամանէ ստիպեցեալ, այնքան խուճապեցաք հապճեպ, մինչ զի ըստ մերումս կարի անգամ ինչ սրբագրելոյ գմիջոց ոչ գտաք»<sup>5</sup>: Հաշվի առնենք նաև հետևյալ պարագան. Հակոբ Շահամիրյանը հազիվ թե իր տրամադրություն տակ ունենար հիշյալ պատմագրական բոլոր երկերը, մանավանդ որ դրանց մի մասը դեռևս տպագրության չէր արժանացել, գտնվում էր ձեռագիր վիճակում: Ուրեմն «Նոր տետրակն» այդ երկերի հետ առնչվում է ոչ թե ուղղակի, այլ միջնորդ աղբյուրով:

Ո՞րն է այս վերջին աղբյուրը: Որոնումները մեզ տանում են դեպի «Բառգիրք Հայկազեան լեզուի» երկհատոր մեծածավալ բառարանը, որը XVIII դ. աննախադեպ երևույթ էր հայ մշակույթի պատմության մեջ, մեծանուն Մխիթար Սեբաստացու և նրա աշակերտների խոշորագույն ներդրումը հայագիտության ասպարեզում: «Բառգիրքը», որի առաջին հատորը տպագրվեց Մխիթարի մահվան տարին, 1749 թ., իսկ երկրորդը՝ նրա մահվան 20-րդ տարելիցին, 1769 թ., շտեմարանում է հայոց լեզվի բառազանձը, այն, ինչ հնարավոր էր եղել հավաքել ու մեկնել Մխիթարյանների մատչելի գրավոր աղբյուրներից, ինչպես նաև ժողովրդի կենդանի, բանավոր խոսքից: Բառարանի լույս ընծայումը պայմանավորված էր Մխիթարի ծրագրած ու ծավալած լուսավորական, կրթական ու գիտական մեծ գործունեությամբ: «Եւ զայս ամենայն, — Մխիթարի մասին կարդում ենք բառարանի երկրորդ հատորի առաջաբանում, — փութայր աշակերտօք իւրովք աւարտել ոչ այլոյ ինչ յաղագս, բայց եթէ առ ի սլէտս գարգացման ուսումնասիրաց, որք առանց այսպիսի բառարանի իբրու արհեստաւորք են անգործի»<sup>6</sup>:

«Բառգիրքն» այդ իմաստով իր առաջին կարևոր օժանդակությունն է բերել նաև Հակոբ Շահամիրյանին, արգասավորել նրա աշխատանքը: Ըստ երևույթին տպվելուց անմիջապես հետո դրա երկրորդ հատորը Վենետի-

<sup>5</sup> Նոր տետրակ, էջ 216.

<sup>6</sup> Բառգիրք Հայկազեան լեզուի. հ. Բ, Վենետիկ, 1769, էջ 3:

կից հասել է հեռավոր Մադրաս, թերևս շտապ կարգով առաքվել է Շահասի՛րյաններին, որոնք ընդամենը երեք տարի անց տպագրել են «Նոր տետրակը»: Ի՞նչն էր մերձեցնում Շահասի՛րյաններին Մխիթարի ու Մխիթարյանների հետ. լուսավորության համար պայքարը, հայ ժողովրդին կրթելու, նրա մտավոր ունակություններն արթնացնելու ու զարգացնելու, առհասարակ նրա հոգևոր աշխարհը կազմակերպելու ձգտումը, որն ընդհանուր պահանջ ու գործունեության նպատակ էր թե՛ Շահասի՛րյանների և թե՛ Մխիթարյանների համար:

«Նոր տետրակի» 5-րդ գլխի՝ Արչակունիներին հաջորդող բաժինն ամբողջացնելու համար Հակոբ Շահասի՛րյանն օգտվել է Մխիթարյան «Բառագրքի» երկրորդ հատորում մի առանձին միավոր հանդիսացող «Բառարան յատուկ անուանց, որք գտանին յայլ և այլ դիրս արտաքոյ Աստուածաշունչ զրոց» բառարանից: Դա մեզանում փաստորեն անձնանունների և ընաշխարհիկ բառարանների նախատիպն է համեմատաբար նեղ ընդգրկումների և փոքր ծավալի մեջ: Հայոց պատմության դեմքերի՝ մարդկանների, իշխանների ու թագավորների մասին բազմաթիվ բառահոգվածներ, գրեթե նույնությամբ քաղելով «Բառագրքից», «Նոր տետրակի» հեղինակը, այբբենական հաջորդականության փոխարեն, դրանք խմբավորել է ժամանակագրական կարգով իր օգտագործած մյուս հիմնական աղբյուրի՝ Զահկեցու նկատմամբ բազմաթիվ տեղերում նախապատվությունը տալով Մխիթարյան «Բառագրքին»: Վերջինից «Նոր տետրակի» 5-րդ գլխի կախումն այնքան ակնբեր է, որ ղուգահեռ օրինակներով ապացույցվյալ բացարձակապես ավելորդ աշխատանք կլինեն: «Բառագրքի» մի քանի տասնյակ հոգվածներ, թեթևակի փոփոխությունների ենթարկված, ներառվել են «Նոր տետրակի» մեջ տեղադրվելով ըստ ժամանակագրական հաջորդության: Մատնացույց անենք դրանցից մի քանիսը միայն. Վարդան Մամիկոնյանի հերոսությունների ու նահատակության պատմությունը համարյա բառացի քաղված է բառարանից. համապատասխան բառահոգվածներից են վերցված նաև Մամիկոնյան Մանկոս (Մանգնոս), Վահան, Վարզ, Համազասպ իշխաններին, Մծեծ Գնունուն, Սմբատ Բագրատունի Բյուրատյանին, Բագրատունի և Արծրունի թագավորներին, Կարսի Բագրատունիներին, Լոռիի Կյուրիկյաններին, Կիլիկյան հայ իշխաններին ու արքաներին վերաբերող հատվածները՝ լրացված Զահկեցու «Դրախտ ցանկալի»-ի նշված գլխի որոշ տեղեկություններով:

Մնում է ավելացնել, որ «Նոր տետրակի» 5-րդ գլխում ինքնուրույնը այն հատվածներն են, որոնցում ներկայացված են Արցախի հինգ հայ մելիքները և վրաց Հերակլ II թագավորը: Դրանք ժամանակակցի ճշմարտապատում վկայություններ ու բնութագրումներ են:

Մխիթարյան «Բառարան յատուկ անուանց»-ից ավելի մեծ կախում ունի «Նոր տետրակի» 6-րդ գլուխը, որը, ինչպես նշեցինք, Հայաստանի և մասամբ էլ այն վայրերի աշխարհագրությունն է, որտեղ նախորդ ժամանակներում կամ XVIII դ. ապրել են հայեր: Ամբողջ գլուխը, սկզբից մինչև վերջ, արտածված է այդ բառարանից՝ ոճական ու շարահյուսական կարգի մանր ու աննշան փոփոխություններով, որոշ բացթողումներով և առանձին հավելումներով: Հավելումները մասամբ քաղված են «Բառագրքի» այլ

բառահոգովածներին և կամ այնպիսի նոր բացատրություններ ու տեղեկություններ են, որոնք գրավոր սկզբնաղբյուր չունեն և բացառապես հեղինակի լրացումն են: Այդ հավելումները, ինչպես հեշտ կարելի է նկատել, նպատակ են հետապնդում Հայաստանի տարածքի պատմական անցյալ անվանումների կողքին տալ XVIII դ. երկրորդ կեսում դրանց փոխարեն կիրառվող անունները կամ պարզապես բացատրություններ են տվյալ բույսի կամ կենդանու տեսակը որոշակի դարձնելու համար: Ամեն դեպքում զգացվում է, որ հեղինակը ձգտում է Հայաստանի աշխարհագրական նկարագրությունը ներկայացնել արդիական տեսքով:

Այգպիսով, «Նոր տետրակի» հեղինակը հավաքողի բավական ծանր աշխատանք է կատարել. բառարանում եղած ցրիվ նյութը ի մի է բերել և, որոշ համակարգի ենթարկելով, ստեղծել Հայաստանի նահանգների և դրանցից դուրս գտնվող գաղթահայերով բնակեցված վայրերի ամբողջական նկարագրությունը: Միայն չի լինի, եթե ասենք, որ «Նոր տետրակի» ճշգրտված մինչև XVIII դ. 70-ական թվականները Հայաստանի աշխարհագրությունը նվիրված երկերի մեջ համեմատաբար ամենահամառոտ և ամբողջականն է:

«Նոր տետրակի» հեղինակի աշխատանքը ճշգրտված հիմնականում ընթացել է հետևյալ ծրագրով.

Ա. Նկարագրված են Մեծ Հայքի նախ Պարսկաստանի, ապա Օսմանյան կայսրության ենթակա 15 նահանգները, այնուհետև Առաջին, Երկրորդ, Երրորդ Հայքը, Կիլիկյան աշխարհն ու Հյուսիսային Միջագետքը, իսկ վերջում դրացի և օտար հայաբնակ երկրամասերը: Բառարանային ամբողջ նյութը ըստ այդմ էլ վերադասավորված է, այսինքն՝ բառարանային համակարգը վերածված է այլ վիճակի՝ Հայաստանի աշխարհագրության սիստեմատիկ շարադրանքի:

Բ. Մեծ Հայքի մեկ-երկու նահանգի կաղմի մեջ մտնող դավառների հաջորդականությունը խախտված է, չի տրված այնպես, ինչպես Մխիթարյան բառարանն է տալիս հետևելով հայկական «Աշխարհացոյց»-ին: Այդ շեղումները երևան են գալիս Վասպուրական ու Այրարատ նահանգների նկարագրության մեջ և արտահայտում են «Նոր տետրակի» որոշակի միտումները: Նախիջևանը դարձել է Վասպուրականի առաջին գավառ, մինչդեռ Մխիթարյան բառարանում և «Աշխարհացոյց»-ում 36-րդն է դրա հետևանքով հակառակ դասավորություն են ստացել նաև մյուս գավառները: Ինչու է նախիջևանն առաջ բերված. այդ հեշտ է կուսել: Շահամիրյանները նկատելի տեղ էին տալիս ջրհեղեղի ու Նոյի հետ կապված հայկական ավանդությանը, ըստ որի նախիջևանը Նոյի հիմնած առաջին բնակավայրն է, հին աշխարհից փրկված մարդու առաջին բնակատեղին բիրիական Արարատի դիմաց, որի համար, ինչպես բազմիցս շեշտել են նրանք, հայը պետք է հպարտանա:

Այրարատ նահանգի գավառների շարքում առաջին տեղն է բերված Կոտայքը, որը Մխիթարյան բառարանում և «Աշխարհացոյց»-ում 16-րդն է: Այդ պատճառով բոլորովին փոխված է նաև մյուս 19 գավառների կարգը: Այս փոփոխությունը ևս ունի իր բացատրությունը. Կոտեից գավառի կենտրոն էր Հանդիսանում Երևանը, որը Շահամիրյաններն իրենց քաղա-

քական ծրագրում դիտում էին որպես ապագա Հայկական սահմանադրական միապետության և կամ հանրապետության մայրաքաղաք:

Հարց է ծագում. եթե «Նոր տետրակի» Յ-րդ գլխում Հակոբ Շահամիրյանի կատարածն ի վերջո հանգում է բանաքաղության, «Աշխարհացոյց»-ը թողած հապա ինչո՞ւ է նա դիմել հավաքողի ու խմբագրողի քիչ թե շատ տաժանելի աշխատանքին. չէ՞ որ «Աշխարհացոյց»-ից օգտվելը նրա համար դյուրին էր, մի հուշարձան, որը ինքնուրույն Պատմության հետ միասին, լատիներեն թարգմանությամբ հանդերձ, Վիստոնները 1736 թ. Լոնդոնում հրատարակել էին մեկ գրքով, իսկ այդ գիրքը Շահամիրյանները հաստատապես ունեին իրենց ձեռքի տակ, ինչպես այդ ցույց է տալիս «Նոր տետրակի» ինքնուրույն ներառված մասի և նշված հրատարակության բնագրային համեմատությունը: Այլ կերպ ինչո՞ւ է Հակոբ Շահամիրյանը դիմում զվեյ գեպի Մխիթարի և նրա աշակերտների «Բառագիրքը»: Դա, մեր կարծիքով, բացատրվում է հետևյալ հանգամանքներով.

Ա. Մխիթարյան բառարանն արտացոլում է Հայկական բնաշխարհի XVIII դ. վիճակը, մինչդեռ V–VII դդ. «Աշխարհացոյց»-ը տալիս է վաղ միջնադարյան Հայաստանի աշխարհադրական նկարագիրը: Բերենք միայն մեկ օրինակ. Սյունիքի 12-րդ գավառը «Բառագրքում» անվանվում է Չավնդուր, ինչպես ընդունված է եղել XVIII դ., իսկ նրա հին կովսական անվանումը, որ հանդիպում է «Աշխարհացոյց»-ում, արդեն հնացած էր ու ընթերցողի համար դժվար կռահելի:

Բ. Մխիթարյան բառարանը տալիս է Հայաստանի աշխարհագրության ավելի ամբողջական ու համակողմանի պատկերը, քան «Աշխարհացոյց»-ը: Մխիթարը և նրա աշակերտները, բացի վերջինից, օգտվել են նաև բազմաթիվ այլ աղբյուրներից՝ հայ պատմագիրների ու ժամանակագիրների մոտ հանդիպող տեղագրական տվյալներից, Վարդան Արևելցու «Աշխարհացոյց»-ից, Գրիգոր Խլաթեցու «Հայսմավուրքից» և այլն:

Գ. Մխիթարյանները Հայաստանի բնաշխարհի նկարագրությունը հարստացնում են այնպիսի տեղանուններով, որոնք Հայկական «Աշխարհացոյց»-ում լինել չէին կարող, և նրանք հավաքել ու լրացրել են հիմնականում բանավոր ճանապարհով: Այդպիսի հիշատակումներից են Դավթի բերդի (խոսքը Դավիթ Բեկի բերդի մասին է) և Խնածախ ավանի անունները և այլն:

Դ. Վերջապես, Մխիթարյան բառարանում այդ ամբողջ նյութը մատուցված է այնպիսի գրաբարով, որը «Աշխարհացոյց»-ի լեզվի համեմատությամբ ավելի պարզեցված է, սովորական ընթերցողի համար մատչելի, ընդ որում շատ դեպքերում, պատմական հնավանդ ու տոհմիկ անվանումներին զուգահեռ, տրվում են XVIII դ. ժողովրդի մեջ տարածված անվանումները՝ դրանցից առաջ սովորաբար դնելով «ռամկօրէն» բառը. ասենք, Սյունիքի Աբանդ գավառի համար՝ «ռամկօր. Խաբան կամ Խաբանստան», Ծղունքի (Ծղուկ) համար՝ «ռամկ. Ցաղնայ», Բաղաց գավառի համար՝ «ռամկ. Աճանա», կամ Վայոց ձորի համար՝ «որ այժմ կոչի Եղեգաձոր» և այլն:

Պարզ է, որ նշված առանձնահատկություններն այնպիսի առավելություն են տալիս Մխիթարյան «Բառագրքին», որ «Նոր տետրակի» հեղինակը



գնալու էր դեպի այն, քանի որ նրա նպատակն էր տալ Հայաստանի կենդանի, առկա վիճակի աշխարհագրական նկարագիրը:

Այս ամենից հետո, բնականաբար, հարց է ծագում. «Նոր տետրակի» 5-րդ և 6-րդ գլուխների բանաբաղային բնույթը չի իջեցնում, արդյոք. Հակոբ Շահամիրյանի գործի արժեքը, որն իր մնացած մասերով բացարձակապես ինքնուրույն է: Բանաբաղումն առհասարակ հատուկ է ողջ միջնադարին, հատուկ էր նաև XVIII դ.: Շահամիրյանի գրքի ուժն ուրիշ բանի մեջ է, նրա հայրենասիրական ծրագրումների, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը գաղափարապես նախապատրաստելու և կազմակերպելու մեջ: Իսկ Մխիթարի ու Մխիթարյանների հետ Շահամիրյանների ունեցած մատենագրական առնչությունները մնում են հայ մշակույթի պատմության հետաքրքիր էջերից մեկը, կարոտ ավելի լայն լուսաբանումների:

#### ИЗ ИСТОРИИ ЛИТЕРАТУРНЫХ СВЯЗЕЙ ШААМИРЯНОВ С МХИТАРИСТАМИ

("Словарь армянского языка" как источник "Новой книги")

ՊՈԳՕՏ ԽԱՇԱՏՐՅԱՆ

#### Р е з ю м е

В арменоведении проведены серьезные исследования в оценке армянского патриотического кружка Мадраса и особенно деятельности Шаамирян. Их литературное наследие по праву считалось вершиной армянской политической мысли с последней трети XVIII в. — до Хачатура Абовяна. В статье выясняются источники "Новой книги, называемой Увещеванием". Выясняется, что автор этого труда частично пользовался 20-й главой книги армянского католикоса Казара Джахеци (1737—1751) "Желанный рай" и более свободно — вторым томом изданного в Венеции в 1769 г. мхитаристами "Словаря армянского языка", с его помощью придав целостный вид 5-й главе "Новой книги", содержащей подробный очерк армянской истории, и полностью изложив 6-ю главу, относящуюся к географии Армении.

#### FROM THE HISTORY OF THE SHAHAMIRIANS' LITERARY TIES WITH THE MEKHITARISTS

("Haikazian language Word Book" as a source of the "New Notebook ")

ՊՈԳՈՏ ԽԱՇԱՏՐՅԱՆ

#### S u m m a r y

The assessment of the activities of the Madras Armenian national loyalty group, the Shahamirians and their literary heritage in particular, was the subject of a serious research in Ar-

menology. Their service was rightly considered as the highlight of the Armenian political thinking in the last 30 years of the 18th century, right before the advent of Khachatur Abovian. However, additional investigation is required to clarify the sources of the book entitled "The New Note-Book Called Expostulations". It appears that the author of this book made a partial use of chapter 20 of Ghazar Jahketsi's (Armenian Catholicos, 1737-1751) book "Desirable Paradise" and made a more abundant use of volume 2 of the "Haikazian Language Word Book" published in Venice in 1769 by Mekhitar Sebastatsi and his pupils. In this way he completed chapter 5 of "The New Note-Book Called Expostulations" in which he dealt with the Armenian history. He made a full use of the Word Book in writing chapter 6, which is an account of Armenia's geography.